

Բովանդակություն

Մեր առաքելությունը, ազդեցությունն ու 2022-ի ներդրումը 4

Կրթությանն ուղղված միջոցների դինամիկա 11

«Այբ» ավագ դպրոցի կրթավճարային ֆոնդ 27

Համայնք և կառավարում 54

Ինքնություն և արժեքներ 60

Հաջողության բանաձև 72

Ուսուցիչներին

«Այբ» ակադեմիա 78

Տավուշի մարզում հանրակրթական նոր չափորոշչի ներդրման փորձարարական ծրագիր 82

«Քան» ակադեմիա 90

Ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագիր 102

Սովորողներին

Զանգվածային մրցույթներ 108

Թիմային մրցույթներ 118

«Քան» ակադեմիա 130

«Այբ» հիբրիդային կրթություն 140

Արարատյան բակալավրիատ 148

«Սերունդ առանց սահմանների» մրցույթ 156

«Այբ» դպրոց 161

Դիլիջանի կենտրոնական դպրոց 164

ԱյբՓոդ 167

Մեր առաքելությունը



Ստեղծել

որակյալ, օրինակելի կրթական համակարգ

Կերտել

ուսյալ և արժեքներ կրող սերունդներ

Միավորել

հասարակությանը կրթության առաքելությամբ

Ձևավորել

կրթությանն աջակցող համայնքներ

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ



ՄԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԸ

2022-ին

«Այբ» հիմնադրամը կրթական ծրագրերին ուղղել է

695 090 171 ՀՀ դրամ

1 598 423 ԱՄՆ դոլար

Միջոցների ծրագրային բաշխում



- «Այբ» հիբրիդային կրթություն
- «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակ
- «Այբ»-ի մրցույթներ
- «Այբ» դպրոց
- «Այբ» ակադեմիա
- Արարատյան բակալավրիատ
- «Սերունդ առանց սահմանների» մրցույթ
- Հանրակրթական չափորոշիչների ներդրման փորձարարական ծրագիր՝ ԵՄ և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ
- Կրթաթոշակ լավագույն բուհերի ուսանողներին

Աճի տեմպեր

+1,25 անգամ աճ
«Այբ կրթական հանգույց» հիմնադրամին ուղղված միջոցներ

+5 անգամ աճ
«Այբ հիբրիդային կրթություն» ծրագիր

+1,94 անգամ աճ
Արարատյան բակալավրիատի քննություններ

	2021	2022
«Այբ կրթական հանգույց» հիմնադրամին ուղղված միջոցներ	76 332 441,00 ՀՀ դրամ	95 202 875,50 ՀՀ դրամ
«Այբ» հիբրիդային կրթություն	15 619 262,11 ՀՀ դրամ	78 143 538,99 ՀՀ դրամ
ԱԲ-ի քննություններ	38 471 327, 35 ՀՀ դրամ	74 641 743,70 ՀՀ դրամ

Կրթությանն ուղղված միջոցների դինամիկա

2019 **507 040 671,11** ՀՀ դրամ

2020 **442 005 646,25** ՀՀ դրամ

2021 **621 544 771,59** ՀՀ դրամ

2022 **695 090 170,74** ՀՀ դրամ



Կրթական ծրագրերի ներքին և արտաքին ֆինանսավորման աղբյուրներ



Հիմնադրամի կողմից ներգրավված ինստիտուցիոնալ և գործընկերային ֆինանսավորում

Համայնքից ստացված նվիրաբերություններ

Linear (հիմնադրամի կողմից ներգրավված ինստիտուցիոնալ և գործընկերային ֆինանսավորում)

Ֆինանսական կայունության աճ

	2019	2020	2021	2022
Հիմնադրամի ներգրաված ինստիտուցիոնալ և գործընկերային ֆինանսավորում	**10 998 053** ՀՀ դրամ	**36 622 544** ՀՀ դրամ	**232 662 273** ՀՀ դրամ	**294 017 053** ՀՀ դրամ
Համայնքից ստացված նվիրաբերություններ	**129 590 225** ՀՀ դրամ	**142 601 703** ՀՀ դրամ	**338 940 258** ՀՀ դրամ	**401 073 117** ՀՀ դրամ

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Այբ» կրթական հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամուտների և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Grant Thornton

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

Grant Thornton

նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նարիկ Ամեմյան, FCCA
Աուդիտի պատասխանատու

30 հունիսի 2023թ.

#մերարժեքները

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Հանրության վստահություն հիմնադրամի գործունեության հանդեպ, թիմի վստահություն սեփական առաքելության ու նպատակների հանդեպ և փոխադարձ վստահության մշակույթ թիմակիցների միջև



ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Աջակիցների մեր մեծ համայնքն ամեն տարի հաստատում է իր պատրաստակամությունն ու պատասխանատվությունը՝ ներդրումներ կատարելու և կրթության նոր որակ բերելու մեր երկրում: Յուրաքանչյուր աջակցություն ոգեշնչող է մեզ համար և շարունակում է հսկայական ազդեցություն գործել մեր ծրագրերի բոլոր շահառուների վրա Հայաստանում, Արցախում և սփյուռքում:

Կրթության գաղափարի շուրջ միավորում

2022-ին հիմնադրամի զարգացման և ծրագրերի համար կատարվել է

183 նվիրատվություն

ՄԱՍՆԱՎՈՐ

161
նվիրատվություն

Անհատ
117
բարերար

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ

22
նվիրատվություն

Միասին մենք ապագա ենք նվիրում նոր սերնդին

Անհատ բարերարներ

Ալեքսեյ Կինյով | Ալեքսանդրա Սմիրնովա | Ալիսա Հովհաննիսյան | Անահիտ Գևորգ Ջանալբաշյան
Անահիտ Հարությունյան | Անժելա Բալթայան | Անի Սարգսյան | Աննա Հայթայան | Անուշ Մինասյան
Անտոն Կիրիլով | Աշոտ Մկրտչյան | Աշոտ Պողոսյան | Արամ Փախչանյան | Արթուր Ամրոյան
Արթուր Ջանիբեկյան | Արման Դարբինյան | Արման Հարությունյան | Արման Ավետիսյան | Արմեն Առաքելյան
Արմեն Օրուջյան | Արմինե Հայրապետյան | Արմինե Գասպարյան | Արմինե Կիրակոսյան
Արփինե Կիրակոսյան | Արմինե Ղազարյան | Արսեն Գալստյան | Արսեն Ղազարյան | Արտակ Հովհաննիսյան
Աստղիկ Խառատյան | Արտավազդ Մինասյան | Գագիկ Սարդարյան | Գայանե Խաչատրյան
Գայանե Դոլուխանյան | Գայանե Արամյան | Գնել Նազանյան | Գոհար Պետրոսյան | Գոհարիկ Հովհաննիսյան
Գոռ Ղազարյան | Գրիգոր Մակիչյան | Դավիթ Զոհրաբյան | Դավիթ Իսկանդարյան | Դավիթ Մանուկյան
Դավիթ Յան | Դիանա Պարանյան | Դավիթ Սահակյան | Դավիթ Փախչանյան | Դմիտրի Շամենկով
Դմիտրի Վոլկով | Ելենա Խաչվանքյան | Եկատերինա Ախանովա | Սիլվա և Եվգենի Յանգ
Էլլադա Գաբրիելյան | Էմմա Գրիգորյան | Իգոր Խալաթյան | Ինգա Թորոսյան | Լիլիթ Համբարձումյան
Լիլիթ Շահնազարյան | Լիլիթ Սանահյան | Լիլիթ Միերյան | Կարեն Գևորգյան | Կարեն Մուսայելյան
Կարինե Սիմոնյան | Կարո Սարգսյան | Հակոբ Մոմջյան | Հայկազ Ֆանյան | Հասմիկ Սահակյան
Հեղինե Ալեքսանյան | Հմայակ Դանիելյան | Հովիկ Վարդանյան | Մարտին Մինասյան | Մայք Յան
Մանանա Թարփոշյան | Մեսրոպ քահանա Արամյան | Միխայիլ Մոնախով | Մարինե Կիրակոսյան
Մերի Պետրոսյան | Միեր Տերտերյան | Նատալիա Կոմիսարովա | Նազարեթ և Նիլա Ֆըսթըգճյաններ
Նաիրա Մարգարյան | Նարե Խլղաթյան | Նարինե Ղազարյան | Նարեկ Խաչատրյան | Նարեկ Գաբրիելյան
Նարեկ Մանուկյան | Նվարդ Առաքելյան | Ծարմաղ Սաքունց | Ծուշան Պողոսյան | Ծուշանիկ Բասմաջյան
Պիտեր Ղազարյան | Ռիմմա Պողոսյան | Ռուբեն Հարությունյան | Ռուզաննա Մայիլյան | Սարգիս Բաղալյան
Սեդրակ Քոչարյան | Սերգեյ Կուզնեցով | Սինան Սինանյան | Սոնա Ասատրյան | Սոնա Կոշեցյան
Սոֆյա Մնջոյան | Սպարիկ Հայրապետյան | Վահե Ամիրբեկյան | Վարդան Բաբիկյան | Վասիլի Բուրով
Վոյչեկ Վանիեկ | Տաթևիկ Ավետիսյան | Տաթևիկ Առաքելյան | Տաթև Ադամյան | Տիգրան Բունիաթյան
Տիգրան Հարությունյան | Տիգրան Մայիլյան | Ռաֆֆի Ֆըսթըգճյան | Փոլ Զավեն Ակյան | Քնարիկ Գալստյան
Քնարիկ Ջալաթյան | Օլգա Արեֆևա

Նվիրատու կազմակերպություններ

- «Վարդանյան ընտանիք» ԲՀ
- Foundation Azad Ballard
- Բարրի
- Թիմ Տելեկոմ
- Պրոֆխոլոդ
- Իդրամ
- ՀԲԸՄ
- Զիգզագ
- ԷՓԱՄ Սիսթեմզ
- Արիդես
- Տաշիր Գրուպ

Ձեր նվիրատվության կարևորությունն ու ընդգրկումը



Սովորում է «Այբ» դպրոցում՝ կրթաթոշակի 99 տոկոսի փոխհատուցմամբ

Մարիա Ղուկասյան

Արցախ, Ստեփանակերտ

«Այբ»-ի միջավայրն ամենաշատն է ինձ դուր գալիս: Միշտ ցանկացել եմ լինել «Այբ»-ի արժեհամակարգը կրող մի մասնիկ, քանի որ սկսած բուն սկզբունքներից մինչև անձնակազմ և աշակերտներ՝ «Այբ»-ը սովորեցնում է լինել հասարակությանն օգտակար մասնիկ, որը հետագայում կարող է գործիք լինել մեր երկրի զարգացման համար: «Այբ»-ը նախևառաջ տալիս է առավել համարձակ նպատակներ դնելու հնարավորություն: Եթե ես չլինեի «Այբ»-ում, չէի դիտարկելու այն բուհերը, որոնք հիմա եմ մտածում ընդունվել: Ես էլ եմ ուզում հետագայում մնալ «Այբ» համայնքի մի մասնիկ՝ լինի դասավանդման ձևով, թե որևէ այլ կերպ: Երբ «Այբապատումի» ընթացքում գնացել էինք սահմանամերձ գյուղեր, ես հասկացա, որ ուզում եմ կյանքիս ինչ-որ շրջան դասավանդել, կիսել փորձս ու օգտակար լինել, քանի որ գիտակցում եմ, որ «Այբ»-ն էլ ինձ է օգնում:

Տո՛ւր լավագույն կրթության հնարավորություն

«Այբ» ավագ դպրոցի կրթավճարային ֆոնդ

«Այբ» դպրոցի ավագ բաղադրիչը ՀՀ ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է: Ամբողջ Հայաստանից, Արցախից և սփյուռքից ավագ դպրոց ընդունված աշակերտների 76%-ը ստանում է կրթաթոշակ՝ հնարավորություն ունենալով ստանալու 21-րդ դարին համահունչ լավագույն կրթություն:

Անհատ բարերարների ու կազմակերպությունների՝ հիմնադրամին արած նվիրատվությունների շնորհիվ՝ դպրոց ընդունված որևէ աշակերտ ֆինանսական պատճառով չի զրկվում այստեղ սովորելու հնարավորությունից:

2022-ին «Այբ» կրթական հիմնադրամը
«Այբ» ավագ դպրոցի կրթավճարային ֆոնդին
փոխանցել է **81 378 263,79 ՀՀ դրամ**

Ուսման վարձի մասնակի կամ ամբողջական
փոխհատուցում են ստացել «Այբ» ավագ դպրոցի
162 աշակերտից 123-ը

Կրթաթոշակի աղբյուրներ



Բարերարների ներդրում
74 972 489,79 ՀՀ դրամ

Բարի ընթրիք
1 100 000 ՀՀ դրամ

Տարեդարձի դրամահավաք
4 900 000 ՀՀ դրամ

Այբարար
405 774 ՀՀ դրամ

Միացի՛ր մեզ

նոր ձևաչափ

Այբարար

Ամսական նվիրատվության նոր ծրագիրը հնարավորություն է տալիս որակյալ կրթությունը հասանելի դարձնելու Հայաստանի Հանրապետության և Արցախի բոլոր երեխաների համար և անելու դա երկարաժամկետ տարբերակով:

Նվիրի՛ր հնարավորություն: «Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի սովորում է ուսման վարձի փոխհատուցման՝ կրթաթոշակի շնորհիվ:

Տո՛ւր կայունություն: Ամսական նվիրատվությամբ հնարավորություն եք տալիս հիմնադրամին պլանավորելու իր ֆոնդահայթայթումը՝ հստակ պատկերացնելով գումարի արդեն ներգրավված ամենամսյա հոսքը:

2022-ի արդյունքը: Հոկտեմբերից մինչև դեկտեմբեր «Այբարար» նախագծին միացել են 13 բարերար՝ նվիրաբերելով ընդհանուր 405 774 ՀՀ դրամ:

Նամակներ մեր շրջանավարտներից

Էմիլիա Սիմոնյան

Այս նամակը գրելիս նստած եմ Քեմբրիջի համալսարանի կենտրոնական գրադարանում և խորությամբ ուսումնասիրում եմ Հարավային Աֆրիկայում վայրի կենդանիների հետ աշխատելիս լրացրածս նոթատետրի թեմաները: Այս հնարավորությունը ես ստացա 14 տարեկանում՝ «Այբ» ավագ դպրոց ընդունվելու օրը: Ամեն տարի Հայաստանի ու Արցախի տարբեր քաղաքներից ու գյուղերից յուրօրինակ երիտասարդներ հայտնաբերում են «Այբ»-ը և ինձ պես ամեն գնով հաղթահարում ընդունելության գործընթացը՝ կրթությունն արժևորող համայնքի աջակցությամբ երեք տարի աճելու հնարավորություն ստանալու համար:

Էմիլիայի նամակն ամբողջությամբ այստեղ՝

Երջանիկ եմ, որ ժամանակին ունեցել եմ համաշխարհային մակարդակի լավագույն կրթություն ստանալու, իմ կայացման համար կարևոր երեք տարիներն այբական միջավայրում անցկացնելու հնարավորություն: Իմ սրտանց ցանկությունն է, որ հնարավորինս շատ հայ երեխաներ ունենան այդ հնարավորությունը:

Ստեֆանի Հարությունյան

Ստեֆանիի նամակն ամբողջությամբ այստեղ՝

Եթե այբականացմանս սկզբնական փուլում պատասխանելու լինեի այն հարցին, թե ինչ է որակյալ կրթությունը, մեծ ոգևորությամբ կպատմեի, թե որքան եմ կարևորում մրցունակ գիտելիք ձեռք բերելն ու քննադատական մտածողություն զարգացնելը, բայց բաց կթողնեի այն առանցքային տարրը, որի բացահայտման համար հաջորդ երեք տարիներին շատ պիտի պայքարեի:

Այժմ գիտակցում եմ, որ միշտ կարիք եմ ունեցել երկու բանի՝ ծառայել մարդկանց ու անել դա քիմիայի միջոցով:

Իլյա Լալազարյան

«Այբ» ավագ դպրոցի շրջանավարտ

Իլյայի նամակն ամբողջությամբ այստեղ՝

Բարի ընթրիք

Նախագիծը հայտնի, ճանաչված, հետաքրքիր ու հաջողակ անձանց հետ բարեգործական հանդիպում-ընթրիքների աճուրդ է, որից ստացված գումարն ուղղվում է «Այբ» դպրոցի կրթավճարային ֆոնդին:

Աճուրդներն ու մեր արդյունքը 2022-ին

Մասնակից

9 **հյուր**

Հյուրընկալող

6 **ռեստորան**

Նվիրաբերված

1 100 000 **ՀՀ դրամ**

Մեր հյուրերը

Իրինա Դումանյան
Siemens Industry Software CJSC կազմակերպության գլխավոր տնօրեն,
AmCham-ի հոգաբարձուների խորհրդի անդամ

Վարուժան Ավետիքյան
Ֆինանսական ու կորպորատիվ հարցերով փաստաբան,
TK & Partners իրավաբանական ընկերության կառավարող գործընկեր

Հասմիկ Պապյան
ՀՀ ժողովրդական արտիստ, օպերային երգչուհի, սոպրանո

Տիգրան Ջրբաշյան
«Ամերիա»-ի կառավարման խորհրդատվական ծառայության ղեկավար

Աննա Մազմանյան
ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Քրիստինե Սարգսյան
TEDxYerevan-ի համահիմնադիր,
«Ուխտագնացություն դեպի ուղեղ» գրքի հեղինակ

Սերգեյ Թանթուշյան
Բիզնեսի և հաղորդակցության խորհրդատու

Պյոտր Նեմոյ
Ռեժիսոր,
«301 Իմաստության երկիր» հիմնադրամի իմաստուն

Իրինա Սեյլանյան
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն

«Բարի ընթրիքի» տարեվերջյան բարեգործական աճուրդում հաղթած երկու նվիրատուների՝ Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Օրուջյանի ու VAK Group-ի ղեկավար Արման Հարությունյանի շնորհիվ և ցանկությամբ «Այբ» ավագ դպրոցի՝ բանկային գործով հետաքրքրված 7 աշակերտուհի հնարավորություն ունեցան ընթրելու «HSBC Հայաստանի» գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սեյլանյանի հետ:

Տարեդարձի դրամահավաք

2022-ին

իրենց տարեդարձները «Այբ»-ի զարգացմանը նվիրեցին հիմնադրամի հավատարիմ բարերարներ և հիմնադիրներ՝

- **Արամ Փախչանյանը,**
- **Դավիթ Յանը,**
- **Մեսրոպ քհն. Արամյանը:**

Հանգանակվել է

9 365 382 ՀՀ դրամ

Համագործակցություն և գործընկերություն

Գործընկերների և աջակիցների հետ համատեղ աշխատանքում «Այբ»-ը ձգտում է՝

- **ստեղծելու համաշխարհային կարգի որակյալ և մրցունակ հայկական կրթական համակարգ.**
- **կառուցելու ավելի ուժեղ ու սերտ հարաբերություններ միջազգային, տեղական և մարզային համայնքների հետ.**
- **առավելագույնի հասցնելու հանրության համար «Այբ»-ի կրթական, գիտական և մշակութային ծրագրերից ու հնարավորություններից ստացվող համընդհանուր օգուտն ու բարիքը:**

Co-funded by
the European Union

STARMUSVI

Գործընկերություն

Այբական 2022-ը լի է կրթության հասանելիությունը մեծացնող և ինքնակրթության համար բարենպաստ միջավայր ձևավորող նոր ու ռազմավարական գործընկերություններով:

- Համաշխարհային բանկ
- ՀՀ ԿԳՄՍՆ
- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
- ՄԱԿ-ի զարգացման ծրագրեր
- ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ
- «Մարդը կարիքի մեջ» ՀԿ
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ
- ՆԵՖ Բելգիա
- Ռոսատոմի կորպորատիվ ակադեմիա
- «Ստարմուս» VI միջազգային փառատոն

Պրոբոնո գործընկերներ

Գիտելիքի, փորձի, ռեսուրսների փոխանակում և միասնական պատասխանատվության ստանձնում հանուն հանրային բարօրության :

«Այբ»-ը շարունակում է լինել պրոբոնո գործընկերության ջատագով և որակյալ հայալեզու կրթական հնարավորությունների ստեղծման և տարածման շուրջ գործակցել նույն նպատակները կիսող անհատների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ:

- Երեմյան ակադեմիա
- Երևան Մոլ
- Երևանի քաղաքապետարան
- «Զանգակ» գրատուն
- «Զանգակ» հրատարակչություն
- Զիգզագ
- ԷՊԱՄ Սիսթեմզ
- Էպիգրաֆ
- «Ինդիգո Բրենդինգ» գործակալություն
- Լենտեքս
- Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա
- «Հայաստան ծառատունկ» ծրագիր
- Մանե Թայլս
- Մաչանենց տուն
- Մեգա Թոյս
- Նաիրիան
- Նավապետ Քիդի գանձերի կղզի
- Ոսկեվազի գինու գործարան
- Ջուր-Ջուր
- Ջելիֆիշ
- Սի Ի Թի

- Փոքրիկ Էյնշտեյն
- Օրգանիքս
- Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ
- Breavis
- Double Tree by Hilton Yerevan City Centre Hotel
- Honey.am
- Microsoft Innovation Center Armenia
- The Global Environment Facility (UNDP)
- MBG

- Dargett
- Krisp
- Girls in Tech Armenia
- Doping Creative Agency
- PicsArt
- Project Management Advisory
- Startup Armenia Foundation
- SoloLearn
- Quick Start

Հովանավորներ

Այբական նախաձեռնությունների շարունակականության, զարգացման և դրանցում ավելի մեծ թվով շահառուների ներգրավման մեջ կարևոր նպաստ ունեն մեր ծրագրերի հովանավորությունը ստանձնած կառույցները: Մենք հավատում ենք, որ հովանավորությունն ու կրթության մեջ ներդրումներ անելու մշակույթն են նպաստել նրան, որ հավատում ենք ապագային ու դրա հեռանկարայնությանը և սահմանում մեծ երազանքներ ու նպատակներ:

- Թել-Սել
- Թիմ Տելեկոմ Արմենիա
- «Իդրամ» վճարային համակարգ
- Պրոֆխոլոդ
- ՋիԷնՍի-Ալֆա
- Ռենդերֆորեսթ
- Սի Ի Թի
- Սոլարոն
- Տիգրան Բունիաթյան

Շնորհակալություն

THE WORLD BANK
IBRD • IDA

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

UNDP

UNITED NATIONS ARMENIA

POCATOM

unicef for every child

UNFPA

PEOPLE IN NEED CZECH REPUBLIC

NEF BELGIUM

AGBU
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ԵՐԵՎԱՆԻ

Telcell WALLET

team TELECOM ARMENIA

idram

Rostelecom

GNC alfa

ZIGZAG

ԱՐՄԵՆԻԱ

sololearn

STARMUS VI

indigo

LENTEX®

Creative Educational Technologies

barn

breavis

epam

Renderforest

Coca-Cola

Picsart

Girls in Tech AM

OrganiX

doping CREATIVE AGENCY

DOUBLETREE BY HILTON YEREVAN CITY CENTRE

krisp

PMA Project Management Advisory

Microsoft Innovation Center Armenia

SOLARON CONNECT TO THE SUN

JUR AM

PROFHOLDO

YEREVAN mall

TASHIR

Dargett CRAFT BEER

Quick start

JELLYFISH

CITYZEN

MEGA TOYS

Honey am

ՁԱՆԴԱԿ ԳՐՈՒՅՑՆԵՐ

ՁԱՆԴԱԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ManéTiles different

epigraph

ARMENIA TREEPROJECT

MACHANENTS HOUSE

MBG

Louis Charden, Hans&Franz, Alaska by Hans&Franz, Chinar, Vostan by Tsirani ,Tsirani Home, Tsirani Garden, White Hall by Tsirani

ARIDES

Yeremyan ACADEMY

VOSKEVAZ WINERY

NAIRIAN

Ձեր աջակցության շնորհիվ երեխաները հնարավորություն են ստանում ձեռք բերելու և զարգացնելու իրենց գիտելիքներն ու գործնական հմտությունները տեղական և համաշխարհային հեղինակավոր հարթակներում՝ ձևավորելով ապագայի մասնագիտություններում հմտանալու և նորը բացահայտելու մեծ ներուժ:

Նվիրի՛ր ապագա



Համայնք և կառավարում

Այբական գաղափարի շուրջ համախմբված են մարդիկ, ովքեր իրենց ձեռքբերումները համարում են կրթության արդյունք և ձգտում միասնական ներդրմամբ ստեղծել Հայաստանում բարձրորակ կրթություն ապահովող համակարգեր:

Հիմնադրամի կառավարող կազմ

Հիմնադրամի բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է։

Ծանոթացեք մեր խորհրդի կազմին

Արամ Փախչանյան

- «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ նախագահ
- ABBYY ընկերության փոխնախագահ
- «Մեկ ձայն» անկախ դպրոցների հայկական ասոցիացիայի խորհրդի նախագահ

Արթուր Բերդ

- «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ անդամ
- General Quantitative-ի հիմնադիր-տնօրեն
- Ստանֆորդի համալսարանի դոկտոր և գործարար

Արտակ Հովհաննիսյան

- «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ անդամ
- EPAM (Լիտվա) ընկերության բիզնեսի զարգացման տնօրեն
- Տնտեսագիտական գիտությունների թեկնածու

Դավիթ Յան

- «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ անդամ
- ABBYY, iiko, Yva.ai ընկերությունների համահիմնադիր
- Արհեստական բանականության ջատագով

Կարեն Մուսայելյան

- «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ անդամ
- Ներդրումների և ռիսկերի փորձագետ
- Duality Group ընկերության հիմնադիր-նախագահ և գլխավոր ներդրումային տնօրեն

Կարո Սարգսյան

- «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ անդամ
- «Սպեցտորգ» ընկերության հիմնադիր
- Գործարար

Տիգրան Հարությունյան

- «Այբ» կրթական հիմնադրամի ՀԽ անդամ
- «Միկշին» ընկերության հիմնադիր-նախագահ
- «Երազ» բարեգործական հիմնադրամի ՀԽ անդամ

Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը նրա գործադիր տնօրենն է, որն ընտրվում է ՀԽ-ի կողմից և ապահովում հիմնադրամի գործունեությունը համաձայն հաստատված ռազմավարական ծրագրի և նպատակների:

Սոնա Կոշեցյան

- Հիմնադրամի գործադիր տնօրեն

Արժեքներ և մշակույթ

Մենք ստեղծում ենք միջավայր, որտեղ կերտվում են ինքնաճանաչողությամբ օժտված, կուռ արժեհամակարգով, առաջադեմ և ստեղծարար մտքով իրենց երկրին ծառայելու պատրաստ սերունդներ: Ինքնությունն ու արժեքները համակարգային փոփոխություններ բերելու մեր բանալիներից մեկն է և իր արտացոլումն է ստացել նաև համանուն ուսումնական ծրագրում (ներդրված «Այբ» դպրոցում և «Այբ հիբրիդային կրթություն» նորարարական ծրագրի սովորողների համար): Նույն նպատակին է ուղղված «Ինքնություն և արժեքներ» քննարկումների շարքը, որը մեկ հարթակում է համախմբում մերօրյա անվանի մտքի առաջնորդներին ու հանրությանը:

Ինքնություն և արժեքներ

Գաղափարական քննարկումների շարք



«Ինքնություն և արժեքներ» հաղորդաշարը աշխարհայացքային հիմնահարցերի մասին է։ Քննարկումների նպատակը գաղափարական մտածողության խթանումն է, համայնքաշինական մշակույթի ձևավորումը և արժեքների շուրջ երկխոսության ծավալումը։

Գլխավոր թեմաներն են անձնական և հավաքական ինքնությունը, ճանաչողությունը և արժեքաբանությունը, որոնց շուրջ միավորել ենք մտքի հեղինակավոր առաջնորդների՝ Հայաստանից և արտերկրից։

«Արմենիա» հեռուստաընկերության հետ գործընկերության շնորհիվ շարքը հեռարձակվում է հեռուստատեսությամբ և դառնում ոչ միայն համայնքային, այլև հանրության հետ երկխոսության հարթակ։

IF
Future of Culture in The Era
of Technological Revolution.
AI as a Game Changer
SPEAKERS:

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ԱՐԺԵՔՆԵՐ

#1
Ճանաչողություն

Խոսնակներ

Կարեն Մուսաելյան
ֆինանսական շուկաների և տեխնոլոգիաների մասնագետ, Duality Group ընկերությունների խմբի հիմնադիր նախագահ

Դավիթ Յան
ABBYY, iiko, Yva.ai ընկերությունների և «Այբ»-ի համահիմնադիր

Տ. Մեսրոպ քհն. Արամյան
Հայ առաքելական եկեղեցու քահանա, աստվածաբան, «Այբ»-ի համահիմնադիր

#2
Ճշմարտություն

Խոսնակներ

Արամ Փախչանյան
«Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր և ՀԽ նախագահ

Մանուկ Հերգնյան
«Գրանատուս Վենչուրս»-ի համահիմնադիր, բարերար

#3
Արժեքներ

Խոսնակներ

Արսեն Գալստյան
«Այբ» դպրոցի ՀԽ անդամ, «Տաշիր Մեդիկա» ներդրումային ընկերության գլխավոր տնօրեն

Ռուբեն Հարությունյան
«Այբ» դպրոցի ՀԽ նախագահ, HENDERSON նորաձևության տան հիմնադիր նախագահ

#4
Բարիք

Խոսնակներ

Գրիգոր Հովհաննիսյան
ԱՄՆ-ում Հայաստանի նախկին դեսպան

Արտավազդ Մինասյան
Krisp ու 10Web ստարտափների համահիմնադիր,
«Այբ» դպրոցի ՀԽ անդամ

#5
Առաջնորդություն

Խոսնակներ

Դավիթ Յան
ABBYY, iiko, Yva.ai ընկերությունների և «Այբ»-ի համահիմնադիր

Նուբար Աֆեյան
Flagship Pioneering ընկերության հիմնադիր և գլխավոր գործադիր տնօրեն,
«Մոդեռնա» ընկերության համահիմնադիր նախագահ

Տիգրան Հարությունյան
«Միկշին» կազմակերպության հիմնադիր նախագահ, «Այբ» դպրոցի
ՀԽ անդամ

#6

Հայ ինքնության առանձնահատկությունները

Խոսնակներ

Միեր Նավոյան
Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

Արսեն Ղազարյան
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ, «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ գլխավոր տնօրեն

#7

Մշակույթի ապագան տեխնոլոգիական հեղափոխության դարաշրջանում

Խոսնակներ

Դմիտրի Ակսյոնով
Immaterial Future Association-ի տնօրենների խորհրդի նախագահ, CultTech-ի ջատագով

Դավիթ Յան
ABBYY, iiko, Yva.ai ընկերությունների և «Այբ»-ի համահիմնադիր

Քարմոդի Գրեյ
փիլիսոփա, Դարհեմի համալսարանի Կաթոլիկ աստվածաբանության ասոցացված պրոֆեսոր

Համայնքային օրեր

Այբեցիներն ունեն բարի ավանդույթ՝ տարվա մեջ միմյանց նվիրելու հիշարժան օրեր: Համայնքային մեր օրերը լի են վառ տպավորություններով, ոգևորությամբ ու ժպիտով:
Համայնքային օրն առիթ է ևս մեկ անգամ համախմբվելու մեր առաքելության ու արժեքների շուրջ և շարունակելու մեր ճանապարհը նոր մտքերով ու գաղափարներով հարստացած:

ԱՐԱՐԱՏ
ԵՐԵՎԱՆ

Ավանդական այց Օշական Սուրբ Թարգմանչաց տոնի առթիվ

5-րդ դարում սուրբ Թարգմանիչները հանձն առան լինել ժամանակի գիտության, ճանաչողության և քաղաքակրթական նվաճումների առաջնապահը՝ ոգեշնչման աղբյուր դառնալով մեր լեզուն, մշակույթն ու միտքը հարստացնող հետագա շարժումների համար: Այսօր «Այբ»-ը շարունակում է կրթությամբ վերափոխելու այդ ուղին:

Սուրբ Թարգմանչաց տոնն ավանդաբար համախմբում է այբական համայնքը:

Այս տարի ևս միասին մասնակցեցինք տոնական պատարագին և նոր սերնդի ներկայացուցիչների հետ զրուցեցինք նրանց կյանքում մեր ծրագրերի ազդեցության և կրթության փոխակերպող դերի մասին:

Հաջողության բանաձև

Իրական պատմություններ ոգեշնչման համար

«Հաջողության բանաձևը» վարպետության բաց դասերի հարթակ է: Այստեղ ելույթ են ունենում մարդիկ, որոնց ամենամեծ հարստությունը փորձն է:

«Հաջողության բանաձևը» 2022-ին

Այս տարի «Հաջողության բանաձևի» թեման բարձր տեխնոլոգիաներն էին: Ունեցել ենք աշխարհում գիտատեխնոլոգիական գաղափարների կիրառումը մեկնաբանող և հաջողության գաղտնիքները հայ հանդիսատեսի առջև բացող երկու բանախոսություն:

Բարձր տեխնոլոգիաներ. իրականն ու օրինակելին

Մայիսի 2,
«Ֆիլիպ Մորիս» գիտահետազոտական կենտրոն

Հաջողության 5 սկզբնատառերը

Մարդու բարձրագույն ձգտումը պետք է լինի շրջապատին ծառայելը

Ալ Եսայան
«ԻՆտելինԷյր» կազմակերպության հիմնադիր

Մանրամասները՝

Արհեստական բանականությունը ոչ թե որպես մարդու օգնական, այլ մարդուն հավասար գործընկեր

Մայիսի 12,
«Այբ» դպրոց

Ռոբոտները երբևէ կդառնան մարդու ընտանիքի մաս

Դավիթ Յան

ABBYY ընկերությունների խմբի հիմնադիր

Մանրամասները՝

#մերարժեքները

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

Լավագույն որակ և կատարյալ արդյունք ապահովելու մշտական ձգտում, արդյունավետություն և ամբողջականություն, ինքնակատարելագործում և շարունակական զարգացում

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

«Այբ»-ի առաքելության անբաժան մասն է ուսուցիչների վերապատրաստումն ու կարողությունների շարունակական զարգացումը: Որպես կրթության ոլորտում երկարամյա փորձ ունեցող կազմակերպություն՝ մենք խթանում ենք կրթական ոլորտի մասնագետների՝ սովորելու և զարգանալու մղումը՝ ի բարօրություն մեր երեխաների ապագայի:

2022-ին

ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագրերին ուղղել ենք

99 712 762,81 ՀՀ դրամ

«Այբ» ակադեմիա

«Այբ» ակադեմիան դարձել է հիմնադրամի վերապատրաստումների, զարգացման ու առաջնորդության ծրագրերը համակարգող հիմնական օղակը և նպատակ ունի՝

> ստեղծելու ուսումնառության միասնական հարթակ Հայաստանի Հանրապետության, Արցախի և սփյուռքի մասնագետների համար.
>
> խթանելու մանկավարժամեթոդական նորարար գաղափարների տարածումը.
>
> մանկավարժական համայնքում ձևավորելու միմյանցից սովորելու կրթական մշակույթ:

Վերապատրաստումները՝ թվերով

- **Տավուշում նոր պետական չափորոշչի ներդրում (ԿԳՄՍՆ և ՀԲ)**

  680 ուսուցիչ
  156 ղեկավար
  82 դպրոց

- **Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի (ՅՈՒՆԻՍԵՖ)**

  494 ուսուցիչ

- **«Այբ» համակարգի դպրոցներ**

  127 ուսուցիչ

- **Արարարատյան բակալավրիատ**

  110 ուսուցիչ

- **Պարտադիր ատեստավորում**

  27 ուսուցիչ

Վերապատրաստումների ու նաև մենտորական հանդիպումների շնորհիվ խորացրինք թիմային աշխատանքի, հմտությունների զարգացման և մասնավորապես նախագծի պլանավորման և իրականացման մեր գիտելիքները: Ստացածս կարևորագույն գիտելիքը համարում եմ նախագծային աշխատանքի հիմնական կողմերի ուսումնասիրումը, յուրացումը և համայնքի համար կարևոր մի խնդրի վերհանումը, որպես հիմնախնդիր դրա սահմանումն ու նախագծային աշխատանքի կազմումը: Նախագծային աշխատանքն աշակերտների հետ նոր, ավելի ուսուցողական, կրթական ոլորտի զարգացումը մեծապես խթանող գործիքներից է և, ըստ իս, ոլորտում վերջին ժամանակների լավագույն բարեփոխումը: Այսպիսի հնարավորության համար անչափ շնորհակալ եմ նախագծի կազմակերպիչներին, հովանավորներին և, իհարկե, մեր մենտորներին, ովքեր ամբողջ ընթացքում աջակցում և ոգևորում էին մեզ:

Տիգրան Հովսեփյան
Սյունիքի մարզի Դարբասի
միջնակարգ դպրոցի ուսուցիչ



Տավուշի մարզում հանրակրթական նոր չափորոշչի ներդրման փորձարարական ծրագիր

2022-ին ամփոփվեց Տավուշի մարզում հանրակրթական նոր չափորոշչի ներդրման փորձարարական ծրագիրը, որը ֆինանսավորվել է ԵՄ և Համաշխարհային բանկի կողմից՝ «Եվրամիությունը հանուն նորարարության» նախաձեռնության շրջանակում:

Նոր չափորոշիչների ներդրման գործընթացում «Այբ»-ն իրականացրեց դպրոցների ղեկավար կազմի, ինչպես նաև բնագիտամաթեմատիկական բնագավառի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր՝ ապահովելով վերապատրաստումներ, շարունակական մենտորական աջակցություն և դասավանդման մշտադիտարկում:

Ծրագիրը՝ թվերով

Մասնակից

82 դպրոց

Մանկավարժական վերապատրաստում

680 ուսուցիչ

Առարկայական վերապատրաստում

773 ուսուցիչ

Առարկաներ

8

կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, գիտություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը, թվային գրագիտություն և համակարգչային գիտություն

Մենտորական հանդիպումներ

376

Դասալսումներ ավագ մենտորների կողմից

435

Դասալսումներ տեղացի մենտորների կողմից

147

Վերապատրաստված տնօրեններ և փոխտնօրեններ

156

Ֆոկուսխմբային քննարկումներ

23

Հանդիպումներ տնօրենների հետ

25

Լիլիթ Գրիգորյան
Այրումի դպրոցի մաթեմատիկայի և
համակարգչային տեխնոլոգիաների ուսուցիչ-մենտոր

Վերապատրաստումներից առաջ դպրոցներում դասերն անցկացվում էին ուսուցչակենտրոն մեթոդներով, սակայն նոր չափորոշիչներով և դրան հաջորդող վերապատրաստումներով դասերն առավել աշակերտակենտրոն են:

Մխիթար Առաքելյան
Լճկաձորի դպրոցի տնօրեն

Գնահատման այս նոր համակարգը, նախագծային ուսուցումը և, ընդհանուր առմամբ, կրթական նոր չափորոշիչների ներդրումը իրենց դրական ազդեցությունն են ունենում ոչ միայն աշակերտների, այլ նաև ծնողների վրա: Մենք հավատում ենք, որ այս նոր ձևաչափը առաջիկայում ավելի արդյունավետ է լինելու:

Ծրագրի արդյունքները

«Քան» ակադեմիա

«Քան» ակադեմիայի հայալեզու հարթակն ունի երեխաների հիմնական կրթությունը լրացնող որակյալ առցանց կրթական բովանդակություն: Այն հնարավորություն է տալիս ուսուցիչներին անհատապես հետևելու աշակերտների առաջադիմությանը և ունեցած բացերին՝ լրացնելով դրանք:

«Քան» ակադեմիայի հարթակում գրանցված ուսուցիչներ

11 393

Դեսպան ուսուցչի կոչում ստացած ուսուցիչներ

21

Հարթակի վերապատրաստումներին մասնակցած ուսուցիչներ

240

#ուսուցիչներիհամար

Աշխատարաններ Ծիրակի, Լոռու և Կոտայքի մարզերում

Երևանից հետո ամենաշատ դպրոցներ, աշակերտներ և ուսուցիչներ ունեցող երեք մարզերում՝ Լոռիում, Ծիրակում և Կոտայքում, անցկացրինք աշխատարանների խոշոր ծրագիր:

Ծարքը կազմակերպվել էր համավարակի բերած սահմանափակումների և դժվարությունների պայմաններում առցանց անվճար հայալեզու կրթական ռեսուրսների կիրառման հնարավորություններն ընդլայնելու համար: Դասընթացները նպատակ ունեին խթանելու ուսուցիչների և աշակերտների կողմից «Քան» ակադեմիայի հարթակի հնարավորությունների ու գործիքակազմի լիարժեք ու արդյունավետ յուրացումը, ուսուցման և ուսումնառության արդի մեթոդների կիրառումը:

Աշխատարաններն իրականացվեցին ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության «ԵՄ Քովիդ-19 հետևանքների չեզոքացման աջակցության ծրագիր Արևելյան գործընկերության երկրների համար» ծրագրի շրջանակում:

Ծրագրով վերապատրաստվեց
միջին և ավագ դպրոցների
150 ուսուցիչ

Հաճույքով լսել եմ դասընթացավարներին և կատարել առաջադրանքները: Վերջին նյութերից մեկը «շրջված դասարան» մեթոդի մասին էր: Այս թեմայով դասեր շատ են եղել, բայց «Այբ»-ինն իր ձևաչափով տարբերվում էր: «Քան» ակադեմիայի հարթակը հիբրիդային ձևաչափով ենք կիրառում: Այստեղ առաջադրանքներ կատարելիս երեխաներն ազատ են տնօրինելու իրենց ժամանակը, ինչը, կարծում եմ, նպաստում է, որ ավելի հաճույքով սովորեն:

Արմինե Հովհաննիսյան

Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի ուսուցիչ

Աշխատարաններ Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում

«Քան» ակադեմիան անվճար աշխատարանների շարք անցկացրեց Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի 50-ից ավելի դպրոցների ուսուցիչների և աշակերտների համար:

Շահառու

2 մարզ

52 դպրոց

90 ուսուցիչ

Դասընթացների արդյունքում ուսուցիչները զարգացրին բնագիտամաթեմատիկական առարկաները հետաքրքիր ու արդյունավետ մատուցելու և ոլորտի մասնագիտական պահանջարկի շուրջ խորհրդատվություն տրամադրելու իրենց կարողությունները:

Ծրագրի երկրորդ նպատակային բաղադրիչը թույլ տվեց հարստացնել «Քան» ակադեմիայի հարթակը նոր տեսադասերով՝ անվճար հասանելի դարձնելով դրանք հանրությանը:

Նախաձեռնությունն իրականացվեց ԵՄ կողմից համաֆինանսավորվող «ՁԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» (STRIVE) ծրագրի շրջանակում, որն իրականացրել են հետևյալ կազմակերպությունները՝ ՆԵՖ Բելգիա, «ԱԳԱԹ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ, «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ և Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ:

Մարինե Առաքելյան
Վարդենիսի թիվ 2 և թիվ 4 հիմնական և
Ակունքի միջնակարգ դպրոցներ

Ինքնակրթությունն օգնում է լինելու կազմակերպված և ունենալու գիտելիքների մեծ պաշար: Այն խիստ անհրաժեշտ է թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին: «Քան» ակադեմիայի հայալեզու ռեսուրսները շատ մեծ նշանակություն և դեր ունեն ինքնակրթության համար և նպաստում են նոր գիտելիքների ստացմանը և ամրապնդմանը:

«Քան»-ի աշխատարաններում ձեռք բերեցի ամենակարևորը՝ նոր ծանոթներ, ինչու չէ, ընկերներ, բավականություն ստացա աշակերտների մասնակցությունից, առողջ մրցակցությունից և բացահայտեցի շատ հոյակապ թիմ:

Մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանության մշակում և ներդրում

Ամփոփեցինք ԳՏՃՄԱ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա, արվեստ) առարկաների ուսուցիչների համար մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանական ուղեցույցի մշակման և ներդրման աշխատանքները:

Ծրագրի ընթացքում մշակված մեթոդաբանությունը ներկայացվեց Դիլիջանի ավագ դպրոցի և Երևանի թիվ 108 միջնակարգ դպրոցի ԳՏՃՄԱ առարկաների ուսուցիչներին՝ աջակցելու ԳՏՃՄԱ ոլորտներով հետաքրքրվող աշակերտներին, որ կողմնորոշվեն մասնագիտության ընտրության հարցում:

Փորձարկման փուլի հիման վրա մեթոդաբանությունը ներդնող դպրոցների համար մշակվեց արդյունավետ ներդրման առաջարկությունների փաթեթ:

Ուղեցույցը ստեղծվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից իրականացվող Covid-19 համերաշխության ծրագրի շրջանակում:

Ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագիր

2022-ի դեկտեմբերին «Այբ» կրթական հիմնադրամը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ և «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագրի շրջանակում, մեկնարկեց ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագիր՝ Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ։

Ծրագիրը հնարավորություն կտա Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Վայոց ձորի 33 խոշորացված համայնքների 7-11-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչներին՝

- յուրացնելու նախագծային ուսուցման բովանդակությունն ու քայլերի հաջորդականությունը, քանի որ նախագծային ուսուցումը 2023-ից դառնալու է ուսուցչի աշխատանքի հիմնական բաղադրիչներից մեկը.
- փորձառու մենտորների ուղղորդմամբ գործնականորեն կիրառելու ստացած գիտելիքը և հմտանալու նախագծային աշխատանքի կազմակերպման գործում.
- մասնակցելու միջհամայնքային մրցույթի և հաղթելով կյանքի կոչելու սեփական նախագիծը:

Ծրագիրը կամփոփվի 2023-ին:

#մերարժեքները

ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նորը ստեղծելու և իրականությունը վերափոխելու անընդհատ ձգտում, նորարարության մշակույթի ձևավորում

Սովորողներ

Հիմնադրամը, հավատարիմ մնալով լավագույն կրթությունը բոլորին հասանելի դարձնելու իր տեսլականին, շարունակում է կրթական նոր միջավայրեր ստեղծել Հայաստանի Հանրապետության, Արցախի և սփյուռքի սովորողների համար: Նպատակը մեկն է՝ կրթության լույսը տարածել հազարավոր սովորողների շրջանում:

Միայն 2022-ին

սովորողների համար
նախատեսված ծրագրերին ուղղել ենք

413 171 410,92 դրամ

Մրցույթներ

Արդեն 15 տարի մեզ հաջողվում է համատեղել կրթությունը հետաքրքիր ժամանցի հետ: «Այբ»-ի և՛ զանգվածային, և՛ թիմային մրցույթները սովորողներին խաղային հույզեր պարգևելուն զուգահեռ օգնում են ամրապնդելու գիտելիքները, կողմնորոշվելու ապագա մասնագիտության ընտրության հարցում, մոտենալու գիտությանը և հմտանալու ընտրած մասնագիտության մեջ:

747 313

ՀՀ, Արցախի և սփյուռքի
սովորողների մասնակցության արդյունքը

15 տարվա ընթացքում

**Զանգվածային մրցույթների
մասնակից սովորողների թիվը մեկնարկից ի վեր**

Կենգուրու
441 892 մասնակից

Մեղու
227 236 մասնակից

Ռուսական արջուկ
76 229 մասնակից

Այբ
կրթական հիմնադրամ
#Այբիմրցույթներ
#AybContests

մեղու

Այբ
կրթական
հիմնադրամ
HILFIGER

Մեղու 2022

Արի խաղանք հայերեն

«Մեղու»-ն հայերենի խաղ-մրցույթ է՝ ՀՀ, Արցախի և սփյուռքի 3-12-րդ դասարանների բոլոր աշակերտների համար:

Գրանցված
4340 մասնակից

Բաժանորդագրված
98 դպրոց

2022-ին խաղ-մրցույթն առաջին անգամ ունեցավ դպրոցների համար նոր բաժանորդագրության մոդել, որը հնարավորություն տվեց ունենալու մրցույթին գրանցված բազմաթիվ դպրոցներ:

Գոհար Միրզոյան
Դարբասի միջնակարգ դպրոցի
ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրեն,
«Մեղու» մրցույթի կազմակերպիչ

Բաժանորդագրության մոդելը հնարավորություն է տալիս մրցույթում ընդգրկելու դպրոցի մեր բոլոր աշակերտներին: Հիմա բոլոր երեխաները, անկախ առաջադիմության մակարդակից, կարող են առանց որևէ խնդրի կամ վատ զգալու մասնակցել: Երբ չկա ֆինանսական գործոնը, բոլոր երեխաներն էլ ուզում են մասնակցել:

Մրցույթի գլխավոր գործընկերներ և հովանավորներ

- Երևան Մոլ
- Իդրամ
- Լենտեքս
- Վայբեր

Կենգուրու 2022

Մաթեմատիկական մանկական շարժում

«Կենգուրու» միջազգային խաղ-մրցույթն օգնում է սիրել մաթեմատիկան և տրամաբանությունը: Այս մրցույթը վերածվել է մանկական մաթեմատիկական շարժման, որին ամեն տարի անհամբեր սպասում են շատերը:

Գրանցված
5600 մասնակից

Արեն Մխիթարյան
«Կենգուրու» մրցույթի հաղթող
Այժմ ուսանում է Եվրոպայում

Երկար ժամանակ չէի կողմնորոշվում մասնագիտության ընտրության հարցում, բայց ի վերջո որոշեցի արհեստական բանականություն սովորել, որովհետև ամենից արագ զարգացող ոլորտներից է: Մտադիր եմ կրթությունս շարունակել ԱՄՆ-ում: Ապագա մասնագիտության համար ամենակարևոր առարկայի՝ մաթեմատիկայի նկատմամբ սերս նաև «Կենգուրուին» մասնակցելու արդյունքում է ձևավորվել:

Մոցույթի գլխավոր գործընկերներ և հովանավորներ

- Թել-Սել
- Երևան Մոլ
- Լենտեքս

Ռուսական արջուկ 2022

«Ռուսական արջուկ» խաղ-մրցույթը ռուսաց լեզվի մրցույթ է և համարվում է «Կենգուրու» միջազգային հանրաճանաչ մրցույթի «կրտսեր եղբայրը»: «Այբ» կրթական հիմնադրամը «Ռուսական արջուկ. լեզվաբանություն բոլորի համար» միջազգային մրցույթի բացառիկ կազմակերպիչն է Հայաստանի Հանրապետությունում (2010 թվականից) և Արցախում (2011 թվականից):

Գրանցված
1465 մասնակից



Թիմային մրցույթներ

Պատանի քիմիկոսների մրցաշար
311 թիմ, 1507 աշակերտ
2009–2022

Ուսանողական մրցաշարեր
14 թիմ, 65 ուսանող
2020–2022

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա
92 թիմ, 264 մասնակից
2016–2022

Լեգոստարտ
40 թիմ, 120 մասնակից
2021–2022

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա 2022

Ստեղծի՛ր ռոբոտ, փոխի՛ր աշխարհը

2016 թվականից մրցույթը հնարավորություն է տալիս 8-19 տարեկան սովորողներին ստեղծելու և գործարկելու բազմազան ռոբոտներ, որոնք միջազգայնորեն մրցունակ են և լուծում են կենսական ամենատարբեր խնդիրներ: «Այբ»-ը օլիմպիադայի պաշտոնական կազմակերպիչն է Հայաստանում:

Մասնակիցները 2022-ին

17 թիմ

51 սովորող

Այս տարի Կապանի «Գիտտուն» թիմը, հաղթելով հայաստանյան մրցույթում, հնարավորություն ունեցավ Գերմանիայում ներկայացնելու Հայաստանը:

Տիգրանը Կապանի «Գիտտուն 1» թիմի ամենակրտսեր մասնակիցն է, ում ուղին «Այբ»-ի ռոբոտաշինության մրցույթներում սկսվել է «Լեգոստարտ 2021»-ից:

Ես շատ էի ուզում մասնակցել ռոբոտաշինության մրցույթի, որովհետև փոքր ժամանակվանից, երբ հեռուստացույցով ռոբոտներ էի տեսնում, երազում էի, որ մի օր ես էլ ռոբոտ կստեղծեմ: Ռոբոտներ նախագծելիս ամենաշատը սիրում եմ ռոբոտի համար նոր մեխանիզմներ մշակելն ու դետալներ դնելը: Ես նաև ֆուտբոլ եմ շատ սիրում և ուզում եմ հետագայում թիմով ֆուտբոլ խաղացող ռոբոտներ ստեղծել: Իմ երազանքն է ընկերներիս հետ մասնակցել ՌՀՕ-ի միջազգային փուլին:

Մրցույթի գլխավոր գործընկերներ և հովանավորներ

- Ռոստելեկոմ Արմենիա
- Զիգզագ
- CET

Շնորհակալություն նաև անհատ բարերարներին, որոնք հնարավոր դարձրին, որ ՌՀՕ-ի ազգային փուլի հաղթողը ներկայացնի ՀՀ-ն Գերմանիայի Դորտմունդ քաղաքում կայացած միջազգային փուլին:

Լեգոստարտ 2022

Ստեղծում ենք ռոբոտներ՝ լեգոներով

Այս խաղ-մրցույթը հասանելի է դարձնում ռոբոտաշինությունը ավելի մեծ թվով երեխաների համար՝ հնարավորություն տալով սկսնակ թիմերին փորձ ձեռք բերելու և հետագայում մասնակցելու Ռոբոտների համաշխարհային օլիմպիադային: Ուրախալի փաստ է, որ հենց այս մրցույթի մասնակիցների մեծ մասը մարզերից են:

Ռեկորդային թվով մասնակիցներ 2022-ին

- **29** թիմ
- **87** սովորող

Հաղթողներն
ըստ տարիքային խմբերի

- **WeDo** (5-7) **Whiz Aesculapius**
- **Տարրական** (8-12) **GDL**
- **Կրտսեր** (12-15) **Best Trio**
- **Ավագ** (15-19) **Ռոբոտիկներ**

Մրցույթի գլխավոր գործընկերներ և հովանավորներ

- Ռոստելեկոմ Արմենիա
- Զիգզագ
- CET

Պատանի քիմիկոսների մրցաշար 2022

Պատանի քիմիկոսների մրցաշարը նախատեսված է 9-12-րդ դասարանների աշակերտների համար և անցկացվում է 2010 թվականից: Մրցաշարի ընթացքում քիմիայի սիրահարները լուծում են քիմիայի բարդ առաջադրանքներ, բանավիճում գիտական թեմաների շուրջ և ներկայացնում իրենց հետազոտությունների արդյունքները: Այս մրցաշարի ժամանակ է, որ պատանի գիտնականները թիմով փորձում են պատասխանել այնպիսի հարցերի, որոնք այս պահին գուցե դեռ լուծում չունեն:

Այս տարի մրցույթի մթնոլորտը «պայթյունավտանգ» էր. մրցաշարի ժյուրիի կազմը համալրել էին նախկին մասնակիցները և այս ոլորտով հետաքրքրվածները:

Մասնակից

- **12** թիմ
- **60** սովորող

Դավիթ Հակոբյան
Լավագույն ընդդիմախոս
«Հերացի» թիմ

Մենք սովորում ենք, որ ստեղծենք: Ստեղծում ենք, որ սովորենք:

Բլից.
խաղում են մրցաշարի մասնակիցները

Բլից
մասնակիցների հետ 1

Բլից
մասնակիցների հետ 2

Բլից
ժյուրիի անդամների հետ



Մրցաշարի գլխավոր գործընկերներ և հովանավորներ

- Սոլարոն
- Պրոֆխոլոդ

Բնագիտության ուսանողական մրցաշար. ԲՈՒՄ

Մրցույթը լավագույն հարթակներից մեկն է սովորողներին կապելու ոլորտի լավագույն գործատուների հետ:

Բնագիտության ուսանողական մրցաշարի նպատակը գիտության շուրջ հայ երիտասարդներին համախմբելն է և գիտությամբ զբաղվելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելը: Այս տարի մրցաշարն իր շուրջ համախմբել էր Հայաստանի և ԱՄՆ-ի ավելի քան 40 տարբեր մասնագետների:

Մասնակից

- **4 թիմ**
- **20 սովորող**

Նինա Հոբոսյան

«Այբ»-ի մրցույթների բաժնի համակարգող



Տարիների սպասումից հետո երազանքն իրականություն է դառնում

Բառերով չես փոխանցի այն ոգևորությունը, հաճույքն ու մասնակիցների նկատմամբ հարգանքը, որ զգում ես այս մրցաշարի գիտամարտերում: Թեև ժյուրիի անդամների հետ այս մարտն ինքնաբուխ ստացվեց, շատ ուրախ եմ, որ ի վերջո ես էլ այս ձևաչափով խաղալու երազանքս իրականություն դարձրի: Կուզենայի ինձ փորձել նաև զեկուցողի դերում. երբ ամենից շատ հարցերը քեզ են տալիս, այդ ժամանակ լրիվ ուրիշ ոգևորություն ես ապրում:

Մրցաշարի գործընկեր և հովանավոր ընկերություն

- «Ֆիլիպ Մորիս» գիտահետազոտական կենտրոն

#սովորողներիհամար

«Քան» ակադեմիա

Առցանց անվճար համաշխարհային կարգի կրթություն՝
հասանելի բոլորին և ամենուր

Ծրագիրը՝ թվերով

Հարթակն ունի

- **11 500** տեսանյութ
- **507 200** դիտում (2022-ին)
- **696 800** այցելու (2022-ին)
- **39 707** սովորող
- **4 365** ծնող

2022-ին տեղայնացվել է՝

- **100** բնագիտամաթեմատիկական տեսանյութ
- **60 000** բառ

Տեղայնացման ծրագիրը գերազանցել է տարեկան սահմանված շեմը մոտ 17,5 տոկոսով

Միավորներ հավաքել սկսել եմ փետրվարից և օգտագործել եմ այս փորձառությունը ոչ միայն մրցույթում հաղթելու, այլև քննություններին նախապատրաստվելու համար:

«Քան»-ը շատ հարմար էր անցածս կրկնելու և բացերը լրացնելու համար: Երբեմն առաջ էի անցնում ու նայում 12-րդ դասարանի նյութերը, հիմնականում երկրաչափության բաժինը:

Թեև տնտեսագիտական ուղղվածությամբ եմ ծրագրում շարունակել կրթությունս ու ինձ առավել անհրաժեշտ էր մաթեմատիկայի բաժինը, բայց արվեստինը ևս ուսումնասիրել եմ: Հատկապես հետաքրքիր էին կտավների վերանորոգման մասին նյութերը: Ձեռնարկատիրության բաժնից էլ եմ օգտվել՝ այս ողջ ընթացքում լսելով Չայկովսկու երաժշտությունը:

Սվետլանա Թադևոսյանը սովորում է Հրազդանի Խ. Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոցի 11-րդ դասարանում: «Քան» ակադեմիայի հարթակում հավաքել է 3 649 816 միավոր՝ ցույց տալով առավելագույն երրորդ արդյունքը Կոտայքի մարզից մեր մրցույթին մասնակցող 5-12-րդ դասարանցիների շրջանում:

Մարի Ղարիբյանը՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի թիվ 4 հիմնական դպրոցից սահմանել է ռեկորդ՝ հավաքելով 10 000 000 միավոր՝ «ՁԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» (STRIVE) ծրագրի շրջանակում:

«Քան» ակադեմիան օգնում է բարելավել գիտելիքները, կրկնել իմացածը, ձեռք բերել նոր ծանոթներ ու զգալ առողջ մրցակցություն:

Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին «Քան» ակադեմիայի հայալեզու հարթակից օգտվելու հնարքների մրցույթի շրջանակում ուսուցիչ-աշակերտ գործակցությամբ հաղթող թիմը մասնակցեց Հայաստանում հյուրընկալված, արվեստն ու գիտությունը միավորող համաշխարհային Starmus VI փառատոնին:

Մրցույթի շնորհիվ համատեղ պատրաստված տեսանյութերով՝ ուսուցիչ-աշակերտ համագործակցության հրաշալի օրինակ ցույց տվեցին «Քան» ակադեմիայի դեսպան և Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցիչ Նարինե Մարկոսյանը և նրա երկու աշակերտները՝ Էրիկ Առաքելյանը և Ալեքսանդր Փերիխանյանը: Վերջիններս զբաղեցրել են համապատասխանաբար առաջին և երկրորդ տեղերը:

Նրանց աշխատանքներին և հաջողության պատմությանը կարող եք ծանոթանալ այստեղ՝

2022 թվականի ամառային արձակուրդի ընթացքում «Քան» ակադեմիայի թիմը հարթակի հնարավորությունները ներկայացնելու նպատակով այցելել է՝

- **9 կենտրոն մարզերում,**
- **16 դպրոց։**

Հարթակին ծանոթացել է

1200

աշակերտ

«Քան» ակադեմիայի հարթակը շատ բան կարող է փոխել որևէ առարկայի հանդեպ վերաբերմունքում. այդ մասին լավ գիտեն Մարթան և Ռիմման։ Նրանք սիրում են մաթեմատիկան և դպրոցի դասերին նախապատրաստվում են «Քան» ակադեմիայի հարթակում։

Ռիմմա

Հարթակից օգտվում եմ մոտ երկու տարի: «Քան»-ով սովորելը հեշտ է, քանի որ ամեն ինչ շատ մատչելի ու պարզ օրինակներով է բացատրված: Անհատական սովորելով հանգիստ վերցնում ես ու ընկալում այն, ինչ քեզ հետաքրքրում է՝ առանց կողմնակի մարդկանց: Երբ պետք է, ինքդ ես օգտվում հուշումներից ու գլուխ հանում: Հարթակը գտել եմ համացանցում ինձ հետաքրքրող թեստեր փնտրելիս:

Մարթա

Ցանկանում եմ ծրագրավորող դառնալ և այդ նպատակով ամեն օր մաթեմատիկա եմ պարապում: «Քան»-ից շատ հաճախ եմ օգտվում: Օրինակ՝ երբ ինչ-որ բան չեմ հասկանում կամ վերհիշելու կարիք ունեմ: Գիտեմ, որ ամեն առաջադրանքն անելուց կարող ես միավորներ հավաքել, բայց ինձ դրանք չեն հետաքրքրում. ինձ համար ավելի կարևոր է ոչ թե ճիշտ պատասխանը գտնելը, այլ խնդրի լուծման ձևը հասկանալը:

Մաթեմատիկա հիմա շատ եմ սիրում, բայց միշտ չէ այդպես եղել: Սկզբում զզվում էի մաթեմից: Հետո՝ տատիկիս հետ և «Քան»-ով պարապելով, սկսեցի ամեն ինչ հասկանալ և այդպես սիրեցի մաթեմատիկան:

Համագործակցություն արտաքին գործընկերների հետ

Աշխատարաններ

Եվրոպական միության ֆինանսավորմամբ և «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության «ԵՄ Քովիդ-19 հետևանքների չեզոքացման աջակցության ծրագիր Արևելյան գործընկերության երկրների համար» ծրագրի շրջանակում՝ 1500 աշակերտ

Near East Foundation-ի հետ համագործակցությամբ իրականացվող «ՁԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» (STRIVE) ծրագրի շրջանակում՝ 313 աշակերտ

ForMath Kids
2022

ForMath Kids կրթաժամանցային նախագիծը կազմակերպվել և իրականացվել է Team Telecom Armenia ընկերության աշխատակիցների երեխաների համար:

1 200 000 դրամ
ներգրավված գումար

«Քան» ակադեմիայի հայալեզու հարթակում տեղայնացված բովանդակություն

29
տեսանյութ

81 800
բառ

«Այբ» հիբրիդային կրթություն

«Այբ» հիբրիդային կրթությունը միջազգայնորեն մրցունակ և համապարփակ կրթական ծրագիր է՝ հիմնված «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) ծրագրի վրա: Ծրագիրը նախատեսված է Հայաստանի Հանրապետության և Արցախի հանրակրթական դպրոցների, քոլեջների և ուսումնարանների 10-րդ դասարանցիների համար: Ծրագրին մասնակցել է 66 աշակերտ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերից և Արցախից: (ԱԲ) -ի չորս առարկաների ենթախմբերում ընդգրկվելուց բացի՝ մասնակիցները կազմել են 10 նախագծային թիմեր՝ իրականացնելու բնագիտամաթեմատիկական ոլորտների նախագծեր:

136
դիմորդ

66
մասնակից

10
հաջողված նախագիծ

Փափուկ հմտությունների դասընթացներ

- Հետազոտության հիմունքներ
- Նախագծերի կառավարում
- Նախագծային մտածողություն
- Ծրագրավորման հիմունքներ (Python)
- Ինքնակենսագրական և հիմնավորող նամակ գրելու հմտություններ
- Հարցազրույցների մասնակցելու հմտություններ

Կարևոր փաստեր



- Նոր առարկա՝ «Ինքնություն և արժեքներ» - 17 հանդիպում
- Հանդիպում-այցերի շարք՝ բնագիտամաթեմատիկական ոլորտում հաջողությունների հասած մասնագետների և ընկերությունների հետ
- Մասնագիտական կողմնորոշման նպատակով այցեր ՏՏ ընկերություններ, գիտահետազոտական կենտրոններ, բնագիտամաթեմատիկական տարբեր կրթական կառույցներ

«Այբ» հիբրիդային կրթության պատանի գիտնականների նախագծերը

Greenology

Ծրագրի նպատակը Ծիրակի, Սյունիքի և մայրաքաղաք Երևանի էկոլոգիական վիճակի գնահատումն էր՝ հետազոտելով այնտեղ աճող բույսերը: Հետազոտվող բույսերն էին գյուղատնտեսական նշանակություն ունեցող բալը, կալեն և քաղաքների գեղազարդման նպատակով օգտագործվող ակացիան և եղրևանին: Արդյունքում թիմը ներկայացրեց թունավոր նյութերի ազդեցությունն ու հանդես եկավ առաջարկներով:

Դեպի պերմակուլտուրային Պարտիզակ

Պերմակուլտուրան գյուղատնտեսության մեջ նորարարական մոտեցում է, որի միջոցով շրջակա միջավայրին հնարավորինս քիչ վնաս պատճառելով՝ աճեցնում են բույսեր: Նախագծի շրջանակում ծրագրի մասնակիցները սովորեցին պերմակուլտուրայի հիմունքները, Sketchup ծրագրով պերմակուլտուրային տարածքների նախագծում, չվերականգնվող ռեսուրսների խելամիտ կառավարման մեթոդներ և համայնքներում պերմակուլտուրային էթիկայի զարգացման մեթոդները:

ReEducate

ReEducate-ի թիմն աշխատում է մի հարթակի ստեղծման վրա, որտեղ ցանկացած օգտատեր կկարողանա գտնել իր փնտրած եռաչափ նկարչության վարպետին և պատվիրել ցանկացած եռաչափ մոդել: Մասնակիցները, նպատակ ունենալով զարգացնել SS-ն մարզերում, հարթակում նախապատվությունը տալու են մարզերում ապրող աշակերտներին:

UrbanHooligans. Ազատության պողոտա. քաղաքային միջավայրերի պլանավորման ժամանակակից հիմունքներ

Նախագծի նպատակն էր՝ ուսումնասիրել Ազատության պողոտայում առկա քաղաքաշինական խնդիրները և 3D մոդելի միջոցով ներկայացնել բարելավված վիճակը: Մասնակիցներն Ազատության պողոտայի բարեկարգման իրենց կազմած նախագիծ-առաջարկը պատրաստվում են ներկայացնել Երևանի քաղաքապետարանին:

DaVanVR. Վերցրու անատոմիան քեզ հետ

Անատոմիան ուսումնասիրողների ուսումնական գործընթացն ավելի պատկերավոր և արդյունավետ դարձնելու նպատակով DaVanVR թիմը ստեղծեց անատոմիան եռաչափ ներկայացնող անվճար կրթական հավելված: Հավելվածը կենսաբանությունը տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապելու լավագույն տարբերակներից մեկն է: Թիմի ստեղծած հավելվածն արդեն հասանելի է Google Play-ում: Ներբեռնել հնարավոր է այստեղ՝

AYBIONIK. ՀՀ-ում աճող էկոլոգիապես մաքուր չիչխանի և սալորի պտուղներից բուժական և կոսմետիկ յուղերի ստացում

AYBIONIK նախագծի պատանի գիտնականներն իրականացրին անթափոն արտադրություն՝ ՀՀ-ում աճող էկոլոգիապես մաքուր չիչխանի և սալորի պտուղներից: Սալորի և չիչխանի կորիզներից ստացան բուժական և կոսմետիկ յուղեր, իսկ պտղամսերից՝ լիոֆիլիզատներ և լիոֆիլիզատների պարունակությամբ սինբիոտիկ «Նարինե»:

TickTalk. Արյունածուծ հոդվածոտանիներ վանող բուսական միջոցների ստացում և փորձարկում

Նախագծի նպատակն էր՝ ուսումնասիրել և բացահայտել հոդվածոտանիների նկատմամբ վանող (ռեպելենտ) հատկություններով օժտված որոշ տեղական բույսեր և դրանցից պատրաստել և առաջարկել ամենաարդյունավետ էքստրակտը: Արդյունքում, հավաքելով 5 տեսակի բույսեր և 2 տեսակի տզեր, կատարվեցին լաբորատոր փորձարկումներ, և աշխատանքի վերլուծությունը թույլ տվեց սովորողներին ձեռք բերել մի շարք հիմնարար գիտելիքներ:

RIonic. Ֆունկցիոնալ տեղակալված պիրիդինի ածանցյալների սինթեզ և իոնական հեղուկներում վարքի ուսումնասիրություններ

Նախագծի նպատակն էր՝ սինթեզել բարձր մաքրությամբ և ճշտությամբ նոր պիրիդինի ածանցյալներ, բացահայտել կիրառական արդի նշանակություն ունեցող նոր իոնական հեղուկներ հանդիսացող միացությունները, իզոտոպ հարստացված միացությունների կիրառմամբ հաստատել ռեակցիաների մեխանիզմները և կատարված աշխատանքի մասին հոդվածը տպագրել միջազգային պարբերականներում: Նախագծի ավարտին սովորողները հասցրին կատարել իրենց սահմանած գրեթե բոլոր նպատակները և այժմ նախագծավարի հետ աշխատում են հոդվածի վրա, որը կենսական նշանակություն է ունենալու գիտական համայնքի համար:

Ապրելակերպի և նախասիրությունների գենետիկա

Նախագծի հիմքում ԴՆԹ-ի կառուցվածքի, ֆունկցիաների, մուտացիաների ուսումնասիրությունն էր: Երեխաները կատարեցին ազգաբնակչության գենետիկական պրոֆիլի ուսումնասիրություն՝ կախված տարբեր գործոններից և նախասիրություններից: Ծրագրի մասնակիցները հանգեցին հետևյալ եզրակացությանը՝ որ սուրճի նկատմամբ նախասիրության, իբուպրոֆեն դեղամիջոցի արդյունավետության և ուսումնասիրված հոգեկան հիվանդությունների հիմքում առնվազն մասամբ ընկած են գենետիկական գործոններ:

Հաջողության պատմություն

Մաթեմատիկայից՝ քիմիա
Ինչպես Հարությունը սիրեց քիմիան «Այբ» հիբրիդային կրթության շնորհիվ

Ես երբեք չէի մտածի, որ իմ սիրելի առարկան՝ մաթեմատիկան, կփոխարինեմ քիմիայով: Ավելին՝ կներգրավվեմ մի նախագծի իրականացման աշխատանքներում, որն ամբողջապես կառուցված է քիմիայի շուրջ: Ամեն բան սկսվեց նախագծերի ներկայացումից, երբ նախագծավարները սկսեցին պատմել իրենց առարկայի շրջանակում իրականացվելիք նախագծերի մասին: Նախագծավարի ոգևորությունն ու կատարվելիք աշխատանքի կարևորությունը իմ որոշման կայացման վրա մեծ ազդեցություն ունեցան:

«Այբ հիբրիդային կրթություն» ծրագիր.
շնորհանդես



Սովորում ենք իրագործելով.
«Այբ» հիբրիդային կրթության ամփոփումը

Արարատյան բակալավրիատ

Մենք ձգտում ենք ստեղծել միջազգայնորեն մրցունակ հայալեզու դպրոցական կրթական ծրագիր Հայաստանի Հանրապետության, Արցախի և սփյուռքի հայ սովորողների համար, ձևավորել սովորելու գերազանցության մշակույթ և աջակցել հայկական կրթության զարգացմանը՝ կրթելով 21-րդ դարի պահանջներին համապատասխան հմտություններով և գիտելիքով օժտված քաղաքացիներ:

Արարատյան բակալավրիատը, լինելով միջազգային չափանիշներին համապատասխան միակ հայալեզու կրթական ծրագիրը, շարունակում է «Այբ» դպրոցի շրջանավարտների համար բացել աշխարհի լավագույն համալսարանների դռները:

Միայն 2022 թվականին «Այբ» դպրոցի՝ Արարատյան բակալավրիատի հավաստագիր ունեցող շրջանավարտներից 26-ը միջազգային բուհերից ստացել են ուսանելու հրավեր:

«Այբ» կրթական հիմնադրամը
շարունակում է աշխատել ԱԲ-ի տարածման ուղղությամբ:

2021-2022 ուսումնական տարում «Այբ» դպրոցի շրջանավարտների ընդունելությունների տվյալները

Համալսարան	Դիմորդ	Տոկոսային հարաբերակցություն
Տեղական բուհեր	43	80
Միջազգային բուհեր	9	17

Տեղական բուհեր

Երևանի պետական համալսարան	7
Երևանի պետական բժշկական համալսարան	6
Հայաստանում ֆրանսիական համալսարան	4
Հայաստանի ամերիկյան համալսարան	25
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	1

Միջազգային բուհեր | 9

Վիսկոնսինի համալսարան, Մադիսոն	1
Լյուվենի կաթոլիկ համալսարան	2
Սորբոնի համալսարան	1
Ռուզվելտի համալսարան	1
Գլիոնի բարձրագույն կրթության ինստիտուտ	1
Ռատգերսի համալսարան	1
Կարլսռուեի տեխնոլոգիական ինստիտուտ	1
Արիզոնայի պետական համալսարան	1

«Այբ հիբրիդային կրթություն» ծրագրի մասնակիցները նույնպես ստանալու են ԱԲ-ի դիպլոմ:

ԱԲ-ի դիպլոմ ունի (2017-ից ի վեր)
245 սովորող

2022 թվականին
«Արարատյան բակալավրիատ» հայալեզու կրթական ծրագիրը ճանաչող համալսարանների թիվն
ավելացավ 28-ով՝
դառնալով 152

2022-ին

«Արարատյան Բակալավրիատ» ծրագիրը ճանաչող համալսարանների ցանկը

Նիդեռլանդներ	Ուտրեխտի համալսարան
ԱՄՆ	Փըրդյուի համալսարան
Գերմանիա	Ջեյքոբսի համալսարան, Բրեմեն
Շվեյցարիա	Գլիոնի բարձրագույն կրթության ինստիտուտ
ԱՄՆ	Մեյնի համալսարան
ԱՄՆ	Ռատգերսի համալսարան
ՄԹ	Մարիա թագուհու համալսարան, Լոնդոն
ԱՄՆ	Դելավերիի համալսարան
ԱՄՆ	Մայամիի համալսարան
ԱՄՆ	Մասաչուսեթսի համալսարան, Բոստոն
ԱՄՆ	Արիզոնայի պետական համալսարան
Ֆրանսիա	Սորբոնի համալսարան
Ֆրանսիա	«Օտոգրաֆ» արվեստի և դիզայնի դպրոց

Ֆրանսիա	Արվեստի քոլեջ, Փարիզ
Ֆրանսիա	Փարիզի Կոնդեի դպրոց
Իսպանիա	Մադրիդի Սբ Լուիսի համալսարան
Կատար	Տեխասի A&M համալսարան, Կատար
ԱՄՆ	Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտ
ԱՄՆ	Արիզոնայի համալսարան
Նիդեռլանդներ	Ռուզվելտի համալսարանական քոլեջ
ԱՄՆ	Յուտայի համալսարան
ԱՄՆ	Օկլահոմայի համալսարան
Գերմանիա	Կարլսռուեի տեխնոլոգիական ինստիտուտ
Իռլանդիա	Դուբլինի համալսարանական քոլեջ
Լիտվա	Վիտովտաս Մեծի համալսարան
Կանադա	Ալբերտայի համալսարան
Ֆրանսիա	ICN բիզնեսի դպրոց

Համալսարանների ամբողջական ցանկը՝

Արարատյան բակալավրիատի **քննական կենտրոնն** (ԱԲՔԿ) անկախ մարմին է, որը ստեղծվել է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից: Կենտրոնը մշակում և անցկացնում է ԱԲ-ի աշակերտների ընդունելության, ավարտական և բուհական ընդունելության քննությունները, մշակում ԱԲ-ի առարկայական ծրագրերը և ստեղծում համապատասխան կրթական ռեսուրսները: Քննական կենտրոնն առարկայական ծրագրերի կազմման, ռեսուրսների ստեղծման և քննությունների մշակման, կազմակերպման, անցկացման, ստուգման և գնահատման ընթացակարգերը մշակում է Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի հետ համատեղ:

2022-ին

մեր բարերարական համայնքը

Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնին է ուղղել

շուրջ 75 000 000 ՀՀ դրամ



«Սերունդ առանց սահմանների» միջազգային մրցույթ (GenU 2022)

«Սերունդ առանց սահմանների» գաղափարների մրցույթը Հայաստանում իրականացվում է երկրորդ անգամ՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և «Այբ» կրթական հիմնադրամի համագործակցությամբ: Այս տարի մրցույթին աջակցում են ԿԳՄՍ նախարարությունը, «Սիներջի Հայաստան»-ը, The Body Shop Armenia-ի հայաստանյան ներկայացուցչությունը, ինչպես նաև մասնավոր հատվածի այլ ընկերություններ: Մրցույթը պատանիներին հնարավորություն է տալիս համախմբվելու մեկ գաղափարի շուրջ և, աշխատելով գաղափարի իրագործման վրա, մրցելու ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հասակակիցների գաղափարների հետ:

- Հայտերի ընդունման փուլ
  109 գաղափար
- Բութքեմպ
  12 գաղափար
- Ինկուբացիոն փուլ
  7 գաղափար
- Մրցույթի միջազգային փուլ
  2 գաղափար
- Հաղթող թիմ
  Մեդիալոգ

«Մեդիալոգ» թիմի պատանիների երազանքը՝ իրականություն

Վաղարշակը, Միլենան, Արմենը և Սամվելն այն չորս տասնվեցամյա պատանիներն են, որոնք, միավորվելով մեկ գաղափարի շուրջ, հաղթել են «Սերունդ առանց սահմանների» մրցույթի միջազգային փուլում և, ստանալով 15 000 ԱՄՆ դոլար ֆինանսավորում, հնարավորություն ստացել իրականացնելու իրենց գաղափարը: Գաղափարը մեդիագրագիտության մասին սեղանի խաղ և հավելված ստեղծելն է:

Մեր ամենամեծ երազանքն է հասնել նրան, որ մեր հասարակությունը մեդիադաշտում լինի ավելի գրագետ: Եվ մենք հենց ամենասկզբից հավատում էինք և շարունակում ենք հավատալ մեր առաջարկած լուծմանը: Շարունակելու ենք անել այն, ինչ պիտի անենք, որպեսզի մեր նպատակին հասնենք:

Միլենա Մարգարյան

MeDialog-ը «Սերունդ առանց սահմանների» մրցույթի միջազգային փուլի հաղթող

ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ

նախաձեռնողականություն և ճկունություն, ժամանակին որոշումներ կայացնելու կարողություն, պատրաստակամություն՝ սահմանելու նոր նշաձողեր և հասնելու դրանց:

Կյանքն «Այբ» դպրոցում 2021-2022 ուստարում

Տարվա ձեռքբերումներն ու հաղթանակները

- «Այբ» դպրոցը դարձավ SAT-ի քննական կենտրոն:
- «Այբ»-ի թիմը The Earth Prize 2022 մրցույթի եզրափակիչում «Ռենեմասկ» նախագծով մրցեց 114 երկրի 516 դպրոցների 650 թիմի հետ:
- Ինժեներական ակումբի Ad Astra թիմը դարձավ Քեմուրջյանի անվան համաերիտասարդական տիեզերքի մրցույթի հաղթող: Մեր աշակերտների նախագծած սարքն ուղարկվեց տիեզերք:
- Diamond Challenge միջազգային մրցույթում «Ռենեմասկ» նախագիծը զբաղեցրեց 3-րդ տեղը:
- Ֆիլմարտադրության ակումբի «Արցախ. եռաձայն պայքար» ֆիլմաշարը դարձավ «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային 17-րդ փառատոնի մրցանակակիր:
- Շրջանավարտ Սարգիս Սիմոնյանի գունանկարը հաղթեց Teen Art Awards-ում:
- Հաղթանակներ ու մեդալներ նվաճվեցին QSI-ի թեթև աթլետիկայի մրցումներում:
- Մարմնակրթության ուսուցիչ Կարեն Հովհաննիսյանը դարձավ ուժային եռամարտի Եվրոպայի առաջնության չեմպիոն:
- Հրատարակվեցին «Այբ»-ի աշակերտներ Արամ Բարսեղյանի «Անմահների պատերազմը» և Քսենյա Մուրադյանի «Պատերազմասեր» գրքերը:

Ad Astra թիմը նվաճում է տիեզերքը

«Արցախ. եռաձայն պայքար» ֆիլմաշարը «Ռոլան»-ի մրցանակակիր

«Այբ»-ի թիմը The Earth Prize 2022-ի եզրափակիչում

Վերապատրաստումներ և սեմինարներ միջազգային գործընկերների համար

- Մոսկվայի շրջանի կրթության նախարարության նախաձեռնությամբ «Այբ» դպրոցն անցկացրեց փորձի փոխանակման գործնական սեմինարներ Մոսկվայի շրջանի մեկ տասնյակ դպրոցների տնօրենների համար:

- «Այբ» դպրոցը փորձի փոխանակման սեմինարներ կազմակերպեց Թաթարստանի «Իննոպոլիս» լիցեյի և Մոսկվայի «Լետովո» դպրոցի ադմինիստրատիվ և ուսուցչական անձնակազմերի համար:

- Krisp և 10Web ընկերությունների աջակցությամբ ավագ դպրոցի 13 աշակերտ մասնակցեցին Climate Uturn ծրագրին, մշակեցին իրական խնդիրներ լուծող 7 էկոլոգիական նախագիծ:

- Մոսկվայի թ. 1578 դպրոցի հետ անցկացվեցին առցանց աշակերտական մշակութային և սոցիալական նախագծեր:

- «Այբ» դպրոցի ինժեներական ակումբը մասնակցեց «Ստարմուս» փառատոնին՝ ներկայացնելով այբական մարտական ռոբոտները:

- «Այբ»-ի աշակերտները մասնակցեցին անգլերենի միջազգային օլիմպիադայի եզրափակիչին: Արմինե Քեշիշյանը Հռոմում արժանացավ պատվավոր առաջին մրցանակի:

- Երևանում տեղի ունեցավ «Նոր ժամանակ. արդյունավետ կրթություն» խորագրով առաջին կրթական համագումարը, որին իբրև բանախոս մասնակցեց նաև «Այբ» դպրոցի գործադիր տնօրեն Դավիթ Սահակյանը:

Դիլիջանի կենտրոնական դպրոց

Նախագծերի շնորհանդես

Աշակերտները ներկայացրին 2021-2022 ուստարվա ընթացքում իրենց իրականացրած լավագույն նախագծային աշխատանքները:

Արվեստի շաբաթ Դիլիջանի երկրագիտական թանգարանում

Դիլիջանի երկրագիտական թանգարանում տեղի ունեցավ Դիլիջանի կենտրոնական դպրոցի կողմից իրականացվող Արվեստի նախագծերի ցուցադրության բացման արարողությունը: Ցուցադրությանը ներկայացվեցին մոտ մեկ տարվա ընթացքում աշակերտների ստեղծած աշխատանքներ արվեստի տարբեր ճյուղերից՝ բեմարվեստ, կերպարվեստ, դիզայն, երաժշտություն:

Լաբբոքս

Labbox շարժական լաբորատորիան Դիլիջանի կենտրոնական դպրոցի համայնքային ծրագիրն է: Լաբբոքսերը քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատոր փորձերի արկղեր են, որոնք Դիլիջանի կենտրոնական դպրոցի սաների հետ շրջում են Տավուշի մարզի դպրոցներով և հրավիրում աշակերտներին միասին իրականացնելու հետաքրքրաշարժ թեմատիկ փորձեր: 2022 թ.-ին այս ծրագիրը միավորեց շուրջ 100 աշակերտի: Ծրագրի նպատակը բնագիտական առարկաների և հետազոտությունների նկատմամբ տարածաշրջանի աշակերտների հետաքրքրությունը խթանելն էր:

Արվեստի շաբաթ

Լաբբոքս

Նախագծերի շնորհանդես

Շրջանավարտների օր

Դիլիջանի կենտրոնական դպրոցի տասնամյակին ընդառաջ կազմակերպվեց «Շրջանավարտների օր» միջոցառումը: Հավաքվել էին տարբեր տարիների շրջանավարտներ, աշխատակիցներ, հյուրեր: Միջոցառման նպատակները մի քանիսն էին՝ կազմակերպել ոչ միայն հանդիպում ուսուցիչների և դասընկերների հետ, ջերմ հուշերով վերադառնալ մանկություն, այլև բոլորիս համար ծանր օրերին անհրաժեշտաբար համախմբվել հարազատ դպրոցում և անձի, «ես»-ի ինքնակատարելագործումից հասնել «մենք»-ի միասնական ուժին:

Միջոցառման ընթացքում ծնվեց նախադեպը չունեցող գաղափար՝ ստեղծել ԴԿԴ շրջանավարտների միավորում և պարբերական հավաքույթներում ունենալ արդյունավետ մենտորական և դպրոցանպաստ գործունեություն:

«Միասին» ընտանեկան ճամբար

Դիլիջանի կենտրոնական դպրոցում կազմակերպվեց «Միասին» ընտանեկան ճամբարը, որի նպատակն էր՝ համախմբել ԴԿԴ համայնքը, աջակցել ծնողներին ծնողական դաստիարակության հարցերում, միասին կառուցել միասնականության խորհրդանիշ: Այս անգամ ճամբարին մասնակցեց 14 ընտանիք: Ծնողները մասնակցեցին սեմինարների և դարձան աշակերտներ:

Այբփոդ

Այստեղ մենք խոսում ենք կրթության մասին

Ամիսը երկու անգամ այբական փոդքաստը կամ «Այբփոդ»-ը հրավիրում է բոլորին բացահայտելու Հայաստանում կրթության մարտահրավերներն ու խնդիրները և խորհելու դրանց լուծումների և կրթության ապագայի մասին:

Յուրաքանչյուր թողարկման մեջ մենք համախմբում ենք մանկավարժների, հետազոտողների, սովորողների, տեղական և միջազգային մշակութային գործիչների, ինչպես նաև կրթական ու մշակութային նորարարություններով ոգևորված անհատների՝ քննարկելու հայկական կրթական համակարգին հատուկ երևույթներն ու հեռանկարները:

«Այբփոդ»-ի մեր բոլոր թողարկումներին կարող եք հետևել Spotify-ում, Apple Podcasts-ում, Google Podcasts-ում, Amazon Music-ում և Simplecast-ում:

Հայալեզու կրթական մոդել՝ միջազգային ճանաչումով

Ո՞րերորդ տեղում է կրթությունը, երբ պատերազմն է առաջինը

Գունավո՞ր, թե հավասար կրթություն. ամերիկացի ուսուցիչը՝ կրթական խնդիրների մասին

Երբ էլիտար Օքսֆորդը դարձավ բոլորինը

Բարեգործություն անելու համար պետք է եսասեր լինել



Հայերենը միշտ «թրենդային» է

2022-ի մեր թեմաներն ու խոսնակները

24
թողարկում

32
հյուր

Արցախում խաթարված է 20 հազար երեխայի կրթության իրավունքը

Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է՝ սահմանված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և միջազգային այլ կոնվենցիաներով: Տարեվերջին, սակայն, շրջափակման պատճառով Արցախում 120 000 մարդ հայտնվեց մեկուսացման և խոր հումանիտար ճգնաժամի մեջ, խաթարվեց նաև արցախցի 20 000 երեխայի կրթության իրավունքը:

Ճգնաժամային այս իրավիճակին արագ արձագանքելու և խնդրի մասին բարձրաձայնելու նպատակով Հայաստանի կրթական խոշոր կազմակերպությունները հանդես եկան համատեղ նախաձեռնությամբ: Նրանք հավաքական բաց նամակ-կոչով դիմեցին միջազգային կազմակերպություններին՝ դատապարտելու Ադրբեջանի գործողությունները, որոնք խոչընդոտում են Արցախում կրթության հասանելիությանը և կրթության իրավունքի լիարժեք իրացմանը: Արցախի շրջափակման բացասական ազդեցությունը զգալի է, և քաղաքացիական նախաձեռնությունը հետագայում աշխատանք տարավ փաստահավաք առաքելություն իրականացնելու և տվյալների հիման վրա իրավիճակին անաչառ գնահատական տալու և լուծումներ գտնելու ուղղությամբ:

Այսպես ձևավորվեց Կրթական իրավունքի քաղաքացիական նախաձեռնությունը, որն այսօր միավորել է դաշտի բոլոր դերակատարներին և ավելի լայն նպատակ ունի՝ արձագանքել Հայաստանի Հանրապետության և Արցախի կրթության ոլորտում առկա մարտահրավերներին և աջակցել կրթության իրավունքի լիարժեք իրացմանը:

2022 թվականն անփոփում ենք՝ մտնելով զարգացման նոր փուլ։ «Այբ»-ի վերափոխման այս ուղերձն է արտացոլված հաշվետվության էջերում՝ օրիգամիի պատկերների ու փոխակերպումների միջոցով։ Օրիգամիի արվեստի հիմքում քառակուսի թուղթն է՝ մեզ համար խորհրդանշական երկու կարևոր՝ համակարգ (քառակուսի) և դպրություն (թուղթ) իմաստներով։ Հիմքում ունենալով կրթության ոլորտում համակարգային փոփոխություններ իրականացնելու առաքելություն և հաստատուն արժեքներ՝ «Այբ»-ը միաժամանակ ճկուն և դինամիկ զարգացող կառույց է՝ լավագույնս արձագանքելու կրթական նոր կարիքներին ու նպատակներին։

Միասին դեպի

նոր նպատակներ

#մերարժեքները

ՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարգանք և հոգատարություն երկրի, մարդկանց ու սեփական աշխատանքի հանդեպ, կարգապահություն և հետևողականություն, հաշվետվողականություն և թափանցիկություն

Նվիրի՛ր ապագա